խոնարհուում ոչ մի իշխանութեան, եւ իր ազատութիւնը գտնում է իր սրի եւ իր կոպիտ բռնակալական ուժի մէջ: Իսկ նոյն բռնութեան անբախտ զոհը է մի ազգ, որ վաղուց կորցրել է իր սուրը, որի մէջ վաղուց սպանել է ազատութեան եւ ինքնապաշտպանութեան ոգին, որ իր գլուխը ամենայն հնազանդութեամբ խոնարհեցնում է ամէն մի անիրաւ ձեռքի ներքոյ...

ԺԶ. ՍԻՐԱՀԱՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Միւս օրը ես զարթեցայ խիստ ուշ: Ճանապարհի յոգնածութիւնը, որ առաջին անգամն էր իմ կեանքում, բաշխել էր ինձ հանգիստ եւ երկարատեւ քուն: Ընկերներիցս ոչ մէկը չկար այնտեղ, ես մենակ էի մնացել քնարանում: Իսկոյն հագնուեցայ եւ դուրս եկայ, որ տեսնեմ ո՞ւր են գնացել նրանք:

Գեղեցի՜կ էր լեռնային առաւօտը. ճնճղուկները տակաւին չընկչընկում էին վարսագեղ ուռիների վրայ, որոնցմով հովանաւորուած էր որսորդի տնակը, եւ արեւի առաջին ճառագայթներով լուսաւորուած բակում հաւերն ախորժանոք քաղում էին գետնից յունդերի հատիկները, որ ցրւում էր Մարօն:

Դուրս գալով իմ սենեկից, ես առաջին անգամ նկատեցի, որ Աւօյի տնակը թէ իր շինուածքով եւ թէ մաքրութեամբ համարեա մի պալատ էր, գիւղի միւս խրճիթների հետ համեմատելով: Նա կանգնած էր գետնի մակերեւոյթից բաւականին բարձր. պարունակում էր իր մէջ մի քանի փոքրիկ սենեակներ, նեղ պատուհաններով, ուր ապակու փոխարէն լուսամուտները պատած էին թղթով: Պատերը թէ ներսից եւ թէ դրսից ծեփած էին սպիտակ կաւով, որոնք շատ կոկելուց մի առանձին փայլ էին ստացել: Խրճթի մէկ մասը բաժանած էր անասունների համար, այնտեղ զետեղուած էին՝ ախոռը, մարագը եւ ոչխարների գոմը:

Մարօն ինձ տեսնելով, մօտ վազեց եւ հեգնական ժպիտը երեսին, ասաց.

— Տե՜ս, նրանք գնացին, քեզ այստեղ թողեցին, ի՜նչ տղայ ես, այսքան էլ կը քնե՞ն. կ'ասես թէ, շատ ճանապարհ է եկել, — մի օր եւ կէս, այն էլ ձիով, — դրա համար յոգնել է... Ծո՜յլ: — Ես ոտով մինչեւ Բարդուղիմէոս գնացի, ինչքան հայրիկն ասաց, ձին չնստեցի, ուխտ էի արած: Երբ այնտեղ հասանք, չես հաւատայ Ֆարհատ, ողջ գիշերը չքնեցի, հէնց պար էի գալիս եւ թռչկոտում...: Ա՜խ, ի՜նչ լաւ էր այն գիշերը, ափսոս այնտեղ չէիր, Ֆարհատ: Ուխտաւորները հէնց ածում էին, ածում, «ջան գիւլում» ասում, ու խաղում էին մինչեւ լոյս...: